«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Երևանի պետական համալսարանի

գիտական հարցերի գծով պրոռեկտոր

_____ Ռ.Բարխուդարյան

14 հուլիս 2026թ.

ԿԱՐԾԻՔ

առաջատար կազմակերպության

***Հակոբ Համբարձումի Մանուկյանի «Տարածաշրջանների համաչափ զարգացման հիմնախնդիրները՝ երկարաժամկետ հեռանկարում (ՀՀ օրինակով)»* թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տարածաշրջանների համաչափ զարգացման հիմնախնդիրը գտնվում է ինչպես գիտական ուսումնասիրությունների, այնպես էլ պետական կառավարման համակարգի ուշադրության կենտրոնում, քանի որ այն առնչվում է տնտեսական աճի ներառականության, արտադրական գործոնների արդյունավետ տեղաբաշխման, բնակչության կենսամակարդակի և սոցիալ-տնտեսական հնարավորությունների հավասարակշռված բաշխման խնդիրներին: Տնտեսական զարգացման բնական ընթացքը հաճախ ուղեկցվում է ռեսուրսների, մարդկային կապիտալի, ենթակառուցվածքների և ներդրումային հոսքերի կենտրոնացմամբ առանձին տարածաշրջաններում, ինչի արդյունքում ձևավորվում են երկարաժամկետ անհամաչափություններ:

Նման պայմաններում առավել զարգացած տարածաշրջանները կարող են շարունակաբար ներգրավել լրացուցիչ արտադրական գործոններ, իսկ ավելի սահմանափակ տնտեսական ներուժ ունեցող տարածաշրջանները բախվում են մարդկային կապիտալի արտահոսքի, ներդրումային ցածր ակտիվության և արտադրողականության աճի սահմանափակումների հետ: Արդյունքում առաջանում է անհամաչափ զարգացման ինքնավերարտադրվող համակարգ, որի հաղթահարումը պահանջում է ոչ միայն վերաբաշխման գործիքների կիրառում, այլև տնտեսական ներուժի, մասնագիտացման և արտադրողականության գործոնների համալիր գնահատում:

Հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ տարածաշրջանների զարգացման անհամաչափությունը չի սահմանափակվում միայն եկամուտների կամ տնտեսական ակտիվության տարբերություններով: Այն արտահայտվում է նաև կրթական, առողջապահական, տրանսպորտային, թվային, ֆինանսական և արտադրական ենթակառուցվածքների հասանելիության տարբեր մակարդակներով, որոնք իրենց հերթին ազդում են աշխատանքի արտադրողականության, զբաղվածության որակի և երկարաժամկետ տնտեսական աճի հնարավորությունների վրա:

Հայաստանի Հանրապետության համար նշված հիմնախնդիրը ունի նաև կառավարչական նշանակություն: Տնտեսական, մարդկային և ֆինանսական ռեսուրսների սահմանափակության պայմաններում անհրաժեշտ է ձևավորել այնպիսի մոտեցումներ, որոնք թույլ կտան գնահատել յուրաքանչյուր տարածաշրջանի զարգացման ներուժը, տնտեսական կառուցվածքը, մարդկային կապիտալի որակը և արտադրական գործոնների օգտագործման արդյունավետությունը: Այս տեսանկյունից առանձնակի նշանակություն ունի այն հարցը, թե ինչ չափով են տարածաշրջանի սեփական արտադրողականությունը, ՀՀ մյուս տարածաշրջանների ազդեցությունը և հարևան պետությունների սահմանամերձ տարածաշրջանների զարգացումը պայմանավորում երկարաժամկետ տնտեսական աճը:

Թեմայի ուսումնասիրությունը կապվում է նաև տեղական ինքնակառավարման համակարգի, ռազմավարական պլանավորման և ֆինանսական ինքնուրույնության

հարցերի հետ: Տարածաշրջանների համաչափ զարգացման ապահովումը ենթադրում է կենտրոնական իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինների և ռազմավարական կառավարման գործիքների փոխկապակցված գործողություններ, որոնց միջոցով հնարավոր է բարձրացնել ծրագրերի նպատակայնությունը, ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը և երկարաժամկետ զարգացման դիմակայունությունը:

Այս համատեքստում Հակոբ Համբարձումի Մանուկյանի ատենախոսության թեման ուղղված է ՀՀ տարածաշրջանների զարգացման անհամաչափության գործոնների համալիր գնահատմանը, դրանց ներքին և արտաքին ազդեցությունների վերլուծությանը, ինչպես նաև տարածաշրջանների համաչափ զարգացման ապահովման հայեցակարգային մոտեցումների մշակմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է գնահատել Հայաստանի Հանրապետության տարածաշրջանների զարգացման անհամաչափության հիմնական գործոնները՝ երկարաժամկետ հեռանկարում տարածաշրջանների համաչափ զարգացման ապահովման հայեցակարգի հետագա մշակմամբ:

Նշված նպատակի իրագործման համար հետազոտության շրջանակներում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

1. Գնահատել տարածաշրջանների զարգացման անհամաչափության հիմնական ազդեցությունների, ինչպես նաև այդ անհամաչափության վրա ազդող արտաքին և ներքին գործոնների հարցով ակադեմիական գրականությունը,
2. Գնահատել պետության դերի վերաբերյալ ակադեմիական հայացքները տարածաշրջանների զարգացման համաչափության ապահովման համար տարածքաշրջանային և ազգային ռազմավարությունների իրականացման առումով,
3. Դիտարկել Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության՝ արդյունավետ տարածքային կառավարման ռազմավարության մշակման հարցով առաջարկությունները,

4. Վերլուծել Հայաստանի Հանրապետության տարածաշրջանների հիմնական սոցիալ-ժողովրդագրական և տնտեսական ցուցանիշները՝ տարածաշրջանների անհամաչափության որոշիչ միտումները բացահայտելու համար,
5. Մշակել և փորձարկել տարածաշրջանների մասնագիտացման մեթոդիկան՝ ըստ տնտեսական կառուցվածքի և մարդկային կապիտալի որակի չափանիշների,
6. Վերլուծել հիմնական գործոնային պահանջմունքների տեսանկյունից տարածաշրջանների մասնագիտացման և գործոնային արտադրողականության փոխկապակցվածությունները,
7. Մշակել տնտեսաչափական մոդել՝ առանձին սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությունը տարածաշրջանների գործոնային արտադրողականության մակարդակի վրա գնահատելու համար,
8. Մշակել տնտեսաչափական մոդել՝ ՀՀ տարածաշրջանների տնտեսական աճի վրա արտաքին և ներքին գործոնների ազդեցության դասակարգման վերաբերյալ,
9. Գնահատել ազգային և լոկալ մակարդակների ռազմավարական փաստաթղթերը՝ տարածաշրջանների համաչափ զարգացման ապահովմանն ուղղված առանձին ծրագրերի և միջոցառումների ներդրման համատեքստում,
10. Գնահատել մարզկենտրոնների զարգացման ծրագրերը միջազգային կազմակերպությունների առաջարկություններին համապատասխանության հարցով,
11. Ուսումնասիրել ՀՀ օրենսդրությունը տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական կայունության և անկախության ապահովման գծով,
12. Մշակել հարկային եկամուտների բաշխման ֆիսկալ կանոնների փոփոխության սցենարային մոդել՝ տեղական բյուջեներում փոփոխությունները որոշելու համար,

13. Մշակել պետական կառավարման ռազմավարության փոփոխության հայեցակարգային առաջարկություններ նախագծային կառավարման համատեքստում՝ տարածաշրջանների ֆինանսական անկախության շրջանակներում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտությունների ընթացքում ստացված տեսամեթոդական և կիրառական հիմնական արդյունքները հետևյալն են.

1. Մշակվել և գնահատվել է տարածաշրջանների զարգացման անհամաչափության դետերմինանտների մոդել՝ աշխատանքի արտադրողականության հաշվարկի և Հայաստանի Հանրապետության մարզերի մասնագիտացման բացահայտման հիման վրա:
2. Մշակվել և փորձարկվել է Հայաստանի Հանրապետության տարածաշրջանների տնտեսական աճի գործոնների եռամակարդակ գնահատման մոդել, որը թույլ է տալիս տարբերակել տարածաշրջանի սեփական արտադրողականության, երկրի մնացած տարածաշրջանների արտադրողականության, ինչպես նաև հարևան պետությունների սահմանամերձ տարածաշրջանների ազդեցությունը:
3. Առաջարկվել է տարածքային կառավարման ռազմավարության արդիականացման հայեցակարգ, որն ուղղված է արտադրության գործոնների արտադրողականության բարձրացմանը նախագծային կառավարման մեխանիզմների ներդրման միջոցով՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում մարզային և տեղական ինքնակառավարման ֆինանսական կայունության և ինքնուրույնության ապահովման անհրաժեշտությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից ու առաջարկություններից, օգտագործված գրականության

ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալն առանց հավելվածների կազմում է 141 էջ: Ատենախոսությունը ներառում է 15 աղյուսակ, 41 գծապատկեր և 3 հավելված:

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, կիրառված մեթոդները, ձևակերպված են գիտական նորույթի հիմնական դրույթները, ինչպես նաև ներկայացված են աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Տարածաշրջանների անհամաչափ զարգացման հիմնական պատճառների և այդ հարցում պետական քաղաքականության դերի վերաբերյալ ակադեմիական մոտեցումների գնահատում»** գլխում ներկայացվել են տարածաշրջանների անհամաչափ զարգացման վերաբերյալ տեսական մոտեցումները, այդ անհամաչափության սոցիալ-տնտեսական հետևանքները, ռեսուրսների կենտրոնացման, ագլոմերացիայի, կենտրոն-ծայրամաս փոխհարաբերությունների և արտադրողականության գործոնների վերաբերյալ գիտական մեկնաբանությունները: Գլխում անդրադարձ է կատարվել նաև մարդկային կապիտալի, տնտեսական կառուցվածքի, առողջապահական և կրթական ենթակառուցվածքների ազդեցությանը աշխատանքի արտադրողականության վրա:

Նույն գլխում ուսումնասիրվել են նաև պետության դերի վերաբերյալ ակադեմիական մոտեցումները և միջազգային կազմակերպությունների, մասնավորապես՝ ՏՀԶԿ-ի առաջարկությունները տարածաշրջանների զարգացման արդյունավետ ռազմավարության ձևավորման հարցում: Այս բաժնում դիտարկվել են ռազմավարական պլանավորման, բազմամակարդակ կառավարման, ֆինանսական ապահովման և տեղական մակարդակում զարգացման ծրագրերի նպատակային իրականացման մոտեցումները:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ տարածաշրջանների անհամաչափության հիմնական գործոնների գնահատում»** գլխում կատարվել է Հայաստանի Հանրապետության տարածաշրջանների սոցիալ-ժողովրդագրական և տնտեսական

ցուցանիշների վերլուծություն: Հեղինակը ուսումնասիրել է բնակչության, զբաղվածության, տնտեսական ակտիվության, արտադրողականության, մարդկային կապիտալի և տնտեսական կառուցվածքի հիմնական միտումները՝ նպատակ ունենալով բացահայտել տարածաշրջանների զարգացման անհամաչափության հիմնական դրսևորումները:

Այս գլխում մշակվել և կիրառվել է տարածաշրջանների մասնագիտացման գնահատման մոտեցում՝ հիմնված տնտեսական կառուցվածքի և մարդկային կապիտալի որակի չափանիշների վրա: Առանձնացվել են կապիտալատար, աշխատատար և զբոսաշրջային ներուժ ունեցող տարածաշրջաններ, ինչը թույլ է տվել դիտարկել յուրաքանչյուր տարածաշրջանի զարգացման հնարավորությունները՝ հաշվի առնելով արտադրական գործոնների պահանջմունքները և դրանց արտադրողականության բարձրացման հնարավոր ուղղությունները:

Երկրորդ գլխի շրջանակներում իրականացվել է նաև տնտեսաչափական վերլուծություն՝ աշխատանքի արտադրողականության վրա առանձին սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությունը գնահատելու նպատակով: Բացի ներքին գործոններից, ուսումնասիրվել են նաև ՀՀ տարածաշրջանների տնտեսական աճի վրա ՀՀ մյուս տարածաշրջանների և հարևան պետությունների սահմանամերձ տարածաշրջանների ազդեցությունները: Այս նպատակով կիրառվել է եռամակարդակ գնահատման մոտեցում, որը հնարավորություն է տվել տարբերակել սեփական արտադրողականության, ներքին փոխազդեցությունների և արտաքին սահմանամերձ ազդեցությունների նշանակությունը:

Ատենախոսության երրորդ՝ **«Պետական քաղաքականության գնահատումը տարածաշրջանների համաչափ զարգացման համատեքստում»** գլխում վերլուծվել են ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակների ռազմավարական փաստաթղթերը, զարգացման ծրագրերը և դրանց համապատասխանությունը երկարաժամկետ համաչափ զարգացման նպատակներին: Գլխում դիտարկվել են նաև տեղական ինքնակառավարման ֆինանսական կայունության և ինքնուրույնության հարցերը, հարկային եկամուտների բաշխման հնարավոր սցենարները, ինչպես նաև պետական քաղաքականության արդիականացման

հայեցակարգային մոտեցումները՝ նախագծային կառավարման գործիքների կիրառման տեսանկյունից:

Ատեն ախոսության **եզրակացություններ** բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, ներկայացվել են ՀՀ տարածաշրջանների անհամաչափ զարգացման գործոնների գնահատումից բխող եզրահանգումները և ձևակերպվել են առաջարկություններ՝ ուղղված տարածաշրջանների համաչափ երկարաժամկետ զարգացման ապահովմանը, արտադրողականության բարձրացմանը, ռազմավարական պլանավորման կատարելագործմանը և տեղական ինքնակառավարման ֆինանսական կայունության ամրապնդմանը:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացված ատենախոսության վերաբերյալ առկա են նաև որոշակի դիտողություններ, որոնցից հիմնականներն են.

1. Առաջին գիտական նորույթում հեղինակը նշում է, որ մշակվել է մարզերի մասնագիտացման մոդել, երկրորդ գիտական նորույթում նշում, որ մշակվել է տնտեսական աճի գործոնների եռամակարդակ գնահատման մոդել, սակայն նշված մոդելները միջազգային պրակտիկայում լայնորեն քննարկված են: Աշխատանքում որևէ կերպ ներկայացված չէ, թե հեղինակի կողմից մշակված մոդելներն ինչով են տարբերվում արդեն իսկ գոյություն ունեցող մոդելներից:
2. Ատենախոսության առաջին գլխում բերված վիճակագրական վերլուծությունը նկարագրական բնույթ է կրում: Չնայած կառուցված էկոնոմետրիկ մոդելներին, աշխատանքում բացակայում են պատճառահետևանքային կապերի հիմնավորումները (օրինակ՝ մարդկային կապիտալի և արտադրողականության միջև):
3. Ատենախոսության երրորդ գլխում մանրամասն ներկայացված են մարզկենտրոնների ծրագրերը, սակայն վերլուծությունները հիմնականում նկարագրական է: Բացակայում են համակարգային համեմատությունները, օրինակ՝ SWOT վերլուծություն կամ ՏՀԶԿ-ի 12 կանոնների

համապատասխանություն, ծրագրերի իրականացման խոչընդոտների (ֆինանսական, ինստիտուցիոնալ և այլն) գնահատում:

4. Էկոնոմետրիկ մոդելների ներկայացման ժամանակ նշված չեն փոփոխականները, ժամանակահատվածները, էնդոգենության խնդիրները, ինչը բարդացնում է մոդելների վերարտադրելիությունը (էջ 51, էջ 53): Վիճակագրական տվյալները հաճախ ներկայացված են առանց գրաֆիկների մեկնաբանության խորության հատկապես բնակչության, միգրացիայի և արտադրողականության միտումների վերաբերյալ (Նկար 9, էջ 31, Աղյուսակ 4, էջ 49):
5. Ներկայացրած բազմակողմանի հետազոտությունում բացակայում է տարածաշրջանային զարգացման էկոլոգիական գործոնների վերլուծությունը, մինչդեռ կայուն զարգացման նպատակների համատեքստում՝ տարածաշրջանային մրցունակության, ներդրումային գրավչության, բնակչության կյանքի որակի բարձրացման առումով, տնտեսական և սոցիալական գործոնների հետ մեկտեղ էկոլոգիական գործոնների ազդեցությունն առանցքային է:
6. Տարածաշրջանների համաչանի զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ ՀՀ-ում կատարվել են բազմաթիվ հետազոտություններ, սակայն հեղինակի կողմից դրանց բավարար անդրադարձ չի կատարվել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողություններն էապես ազդում են հետազոտության արդյունքների տեսական և կիրառական նշանակության վրա:

Հակոբ Համբարձումի Մանուկյանի «Տարածաշրջանների համաչափ զարգացման հիմնախնդիրները՝ երկարաժամկետ հեռանկարում (ՀՀ օրինակով)» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի»

7-րդ կետի պահանջներին, հեղինակն արժանի է Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
«Կառավարման և գործարարության» ամբիոնի վարիչ,
տ.գ.թ., դոցենտ՝ Ա. Հ. Հակոբջանյան

Գրախոսներ՝
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
«Կառավարման և գործարարության» ամբիոնի
պրոֆեսոր, տ.գ.դ.՝ Հ. Լ. Սարգսյան

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
«Կառավարման և գործարարության» ամբիոնի
դոցենտ, տ.գ.թ.՝ Ա. Ռ. Գալստյան

Ա.Հ. Հակոբջանյանի, Հ.Լ. Սարգսյանի, Ա.Ռ. Գալստյանի ստորագրությունները հաստատում եմ

ԵՊՀ գիտական քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Վ. Հովհաննիսյան

15.07.26թ.